

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ
ԺԱՄԸ 16:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Խորհրդի անդամներ՝

Ա. Դավթյան	ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Ս. Թադևոսյան	ՀՀ քաղաքաշինության նախարար
Ա. Հարությունյան	ՀՀ բնապահպանության նախարար
Ս. Կարապետյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Գ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Ա. Մովսիսյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար
Ա. Ասատրյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Ա. Աշոտյան	ՀՀ կրթության և գիտության նախարար
Ա. Երիցյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար
Մ. Բադալյան	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ
Ա. Թունյան	ՀՀ Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ
Վ. Կարապետյան	«Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Ր. Մեխյան	Հայաստանի արտահանողների ասոցիացիայի նախագահ
Լ. Յագուբյան	«Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ

Մասնակիցներ՝

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Հ. Դարբինյան	ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Ավետիսյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Վ. Միրումյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ս. Տոնոյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Ս. Սարգսյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի խորհրդական
Գ. Պողոսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի ղեկավար
Վ. Դաբադյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի անդամ
Հ. Հակոբյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի անդամ
Ն. Բադասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի անդամ
Ա. Նազարյան	ՄՖԿ-ի Երևանյան գրասենյակի ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագրի ղեկավար

Ա. Գոմկցյան	ՄՖԿ-ի երևանյան գրասենյակի փորձագետ
Հ. Քաղկեցյան	ՄՖԿ-ի երևանյան գրասենյակի փորձագետ
Ս. Ծատուրյան	ՎՋԵԲ-ի գրասենյակի փորձագետ

1. Հրդեհային անվտանգության պետական տեսչության, բնապահպանության պետական տեսչության և ընդերքի պետական տեսչության ստուգաթերթերի նախագծերին հավանություն տալու մասին

(Վ. Դաբաղյան, Հ. Քաղկեցյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ՝

ա. Հրդեհային անվտանգության պետական տեսչության ստուգաթերթերի նախագծին,

բ. Բնապահպանության պետական տեսչության ստուգաթերթերի նախագծին,

գ. Ընդերքի պետական տեսչության ստուգաթերթերի նախագծին.

2) ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Ա.Երիցյանին՝ Հրդեհային անվտանգության պետական տեսչության ստուգաթերթերի նախագծի վերջնական շտկված տարբերակը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը.

3) ՀՀ բնապահպանության նախարար Ա.Հարությունյանին՝ Բնապահպանության պետական տեսչության ստուգաթերթերի նախագիծը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը.

4) ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար Ա.Մովսիսյանին՝ Ընդերքի պետական տեսչության ստուգաթերթերի նախագիծը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը:

2. Տրանսպորտի պետական տեսչության և էներգետիկայի պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության և ստուգաթերթերի նախագծերին հավանություն տալու մասին

(Վ. Դաբաղյան, Հ. Քաղկեցյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ Տրանսպորտի պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությանը և ստուգաթերթերի նախագծին.

2) հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գ. Բեգլարյանին՝ Տրանսպորտի պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության և ստուգաթերթերի նախագիծը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը.

3) հանձնարարել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար Ա. Մովսիսյանին՝

ա. ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանի հետ համատեղ մեկշաբաթյա ժամկետում ևս մեկ անգամ համատեղ քննարկել էներգետիկայի պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության և ստուգաթերթերի նախագծերը և գալ փոխհամաձայնության,

բ. էներգետիկայի պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության և ստուգաթերթերի նախագծերի վերջնական տարբերակը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

3. ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի և ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից միջազգային համաձայնագրերով որոշակի պարտավորությունների ստանձնման մասին

(Գ. Պողոսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի և ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության և ստուգաթերթերի մշակման նպատակով տրված հանձնարարականների կատարումը չեղյալ համարելու առաջարկին.

2) հանձնարարել ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի նախագահ Ա. Մարտիրոսյանին և ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետ Ա. Մովսեսյանին՝ յուրաքանչյուրն իր

մասով ներկայացնել ՀՀ օրենքների և միջազգային համաձայնագրերից բխող պահանջների համապատասխանեցումների վերաբերյալ առաջարկություններ:

- 4. ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո գործող տեսչական բարեփոխումների քարտուղարությանը 4 հաստիք տրամադրելու և աշխատավարձի ֆոնդին տարեկան 10 700 000 դրամ հատկացնելու մասին

(Գ. Պողոսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանի հետ համատեղ քննարկել և ՀՀ 2013 թվականի պետական բյուջեում նախատեսել ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո գործող տեսչական բարեփոխումների քարտուղարության հաստիքների ֆինանսավորումը.

2) հանձնարարել ՀԳՄ-ների ղեկավարներին՝ յուրաքանչյուրն իր տեսչության պետի միջոցով սահմանել հսկողություն՝ տեսչական ստուգումների տարեկան ծրագրից չչեղվելու (ծրագրով չնախատեսված տեսչական ստուգումներ չիրականացնելու) ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ